Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-894[3]-10.11.2015,06.09.2016-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 29-ի ՀՕ-59-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի հինգերորդ պարբերությունից «, իրավաբանական անձանց միության» բառերը հանել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օր

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հասարակական կազմակերպությունների մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ներքին շուկայի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը**
	1	**2**	**3**	**4**
1	ԱԺ պատգամավոր Թևան Պողոսյան	1.«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	1.Ներկայացվել է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների իրավական վիճակի առանձնահատկությունների, անձեռնմխլի կապիտալի ձևավորման, համալրման, կառավարման, կառավարումից ստացվող եկամուտների օգտագործման վրաբերյալ իրավակարգավորումներ:	1.Անձեռնմխելի կապտալով հիմնադրամների վերաբերյալ ներկայացված իրավակարգավորումները արդեն իսկ իրացված են փաթեթում ներառված՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագծում:
		2.«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 23,	2. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ «գ» և «դ» կետերով, ըստ որի՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է «ա) անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին փոխանցված (տրամադրված) դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների և պետական	2.«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնադրամի հիմնադիրներ կարող են լինել ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձինք, բացառությամբ այն անձանց, որոնց մասնակցությունը հիմնադրամի հիմնադրմանը օրենքով արգելված կամ սահմանափակված է:

		«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս,	պարտատոմսերի արժեքի չափով. դ) անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամտի չափով»: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-րդ կետով «սույն օրենքի իմաստով նվազեցվող եկամուտներ են համարվում՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներից ստացվող գույքը և դրամական միջոցները»:	Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ վերոնշյալ նախագծերով ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում կստեղծվեն հարկումից խուսափելու անկառավարելի ռիսկեր: Մասնավորապես, առևտրային կազմակերպությունները հարկերից խուսափելու նպատակով ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտները կարող են, որպես նվիրատվություն, անսահմանափակ տրամադրել անձեռնմխելի կապիտալով հիմնադրամին՝ դրանց ամբողջ չափով նվազեցնելով իրենց հարկվող շահույթները կամ հարկվող եկամուտները, այնուհետև որպես շահառու ստանալ նշյալ եկամուտներից անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի կողմից ստացվող եկամուտները: Ընդ որում, հարկ է նկատել, որ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի կողմից

				անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացվող եկամուտները շահութահարկով նույնպես չեն հարկվելու: Այլ կերպ ասած՝ նախագծերի ընդունման դեպքում օրենքով կստեղծվեն հնարավորություններ, որպեսզի՝ ա. ներկայումս շահութահարկով հարկվող եկամուտները առանց հարկվելու ուղղվեն անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներ, բ. պետական պարտատոմսերում ներդրված եկամուտները (որոնք ի դեպ ներկայումս նույնպես հարկվում են շահութահարկով) առանց հարկվելու ուղղվեն շահառու հանդիսացող անձանց, այդ թվում ֆիզիկական անձանց: Արդյունքում առաջարկվող արտոնությունների ընդունումը կծառայի ոչ թե նախագծերի առջև դրված նպատակներին, այլ ընդամենը առիթ կհանդիսանա նվիրատու հանդիսացող անձանց (կամ նրանց հետ սերտորեն փոխկապակցված անձանց) պետության հաշվին օրինական ճանապարհներով հարստացնելու համար: Միաժամանակ, հայտնում ենք, որ

				ոչ առևտրային կազմակերպությունների կայացման ու զարգացման համար գործող հարկային օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված են բավական լայն շրջանակի հարկային արտոնություններ: Մասնավորապես՝ 1) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ ա) 8-րդ հոդվածի համաձայն՝ շահութահարկով հարկման նպատակով եկամուտ չեն համարվում ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները, բ) 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք և (կամ) դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0,25 տոկոսի չափով: 2) «Ավելացված արժեքի հարկի

				մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված են հասարակական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը կամ ծառայություն-ների անհատույց մատուցումը: 3) «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկով հարկման նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում (եկամտային հարկով չեն հարկվում) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված և հարկային մարմիններում հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրված օգնության գումարները:

		«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ և 18-րդ կետերով՝ «ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)՝ «17) անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպատակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների և պետական պարտատոմսերի փոխանցումը (տրամադրումը). 18) անձեռնմխելի կապիտալի կառավարումից եկամտի ստացումը:»	1) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝ ա. ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով, բ. ծառայությունների մատուցումը՝ ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն), որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառ-յալ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը): Ծառայությունների մատուցում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը: Միաժամանակ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով թվարկված են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված՝ *ապրանքների*

				մատակարարում կամ *ծառայությունների մատուցում* համարվող այն գործարք-ները, որոնք չեն հարկվում ԱԱՀ-ով (հարկման օբյեկտ չեն համարվում): Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ որպեսզի գործարքը հարկվի ԱԱՀ-ով, նախ այն պետք է հանդիսանա *ապրանքների մատակարարման* կամ *ծառայությունների մատուցման* գործարք, մինչդեռ անձեռնմխելի կապիտալի ձևավորման և (կամ) համալրման նպա-տակով անձեռնմխելի կապիտալով հիմնադրամներին դրամական (այդ թվում՝ արտարժութային) միջոցների փոխանցման (տրամադրման) գործարք-ները, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի կիրառության իմաստով, ապրանքների մատակարար-ման կամ ծառայությունների մատուցման գործարքներ չեն համարվում և նշյալ գործարքները չեն կարող հանդիսանալ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտներ: 2) «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ մասի համաձայն, ԱԱՀ-ից ազատվում են՝

				ա. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կողմից արժեթղթերի օտարումը, բ. տոկոսների ստացումը: Միաժամանակ, Նախագծի 39.10-րդ հոդվածի համաձայն՝ անձեռնմխելի կապիտալը կարող է կառավարվել բացառապես պետական պարտատոմսերում ներդրումներ կատարելու, դրանց տոկոսավճարներից և մարումից եկամուտներ ստանալու միջոցով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ անձեռնմխելի կապիտալով հիմնադրամի կողմից ստացվող տոկոսային եկամուտները, ինչպես նաև պետական պարտատոմսերի մարումից ստացվող եկամուտները ազատված են ԱԱՀ-ից և դրանց մասով կրկին անգամ հարկային արտոնություններ սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է:
		3.«Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված	3.«Բարեգործության մասին» 2002թ. հոկտեմբերի 8-ի ՀՕ-424-Ն ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5-րդ մասով՝ «5. Բարեգործական ծրագրեր իրականացնող	3.Չի ընդունվել: «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ բարեգործական կազմակերպություններն ստեղծվում են հասարակական միավորումների, հիմնադրամների, ինչպես նաև օրենքով

			հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների գործունեության սահմանափակումների, գույքի ձևավորման և կառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով»:	նախատեսված այլ ձևերով: Այս առումով օրենքը սահմանում է ընդհանուր կարգավորումներ բարեգործական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար, իսկ առանձնահատկությունները սահմանվում են իրավաբանական անձանց առանձին տեսակների մասին օրենքներով: Ավելին, օրենքում բացակայում են բարեգործական կազմակերպությունների գործունեության սահմանափակումների, գույքի ձևավորման և կառավարման մասով իրավակարգավորումները:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Զաքարյան	«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ մաս	«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Կազմակերպությունն իրավունք ունի Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել» բառերը փոխարինել «Կազմակերպությունը, կազմակերպության կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակում է» բառերով:	Ընդունվել է մասնակի: Նախագծի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սահմանում է հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները, լրացվել է նոր՝ 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «իրականացրած ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվություն»: Նախագծի 24-րդ հոդվածի 4-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Այն կազմակերպությունները, որոնց գույքի ստացման աղբյուր չեն հանդիսացել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրային միջոցները, իրավունք ունեն Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար

				նախատեսված կայքում հրապարակել ինչպես սույն հոդվածով նախատեսված հաշվետվությունը, այնպես էլ իր գործունեության ցանկացած արդյունքի մասին տեղեկություններ կամ նյութեր»:
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Բեքարյան	1.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ	1.Առաջարկվում է ավելացնել օրենքի հիմնական հասկացությունների բաժին, որտեղ կազմակերպության շահառուները կարող են սահմանվել հետևյալ ձևակերպմամբ. «կազմակերպության շահառուներ են հանդիսանում այն ֆիզիկական և իրավաբանական անձը կամ անձինք, ում շահերը հատվում են տվյալ կազմակերպության նպատակների, ծրագրերի և գործողությունների հետ»:	1.Ընդունվել է մասնակի: Նախագծի 17-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Կազմակերպության շահառուներն են նրա կանոնադրությամբ նախատեսված անձինք կամ անձանց խմբերը, *որոնց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված է Կազմակերպության գործունեությունը:*»
		2.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	2.Հանել Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը:	2.Չի ընդունվել: Հասարակական կազմակերպությունների՝ այլոց իրավունքների պաշտպանության խնդրով դատարան դիմելու իրավունքի իրացումն առայժմ սահմանափակվում է շրջակա միջավայրին վերաբերող հարցերով: Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության ընդլայնումը կիրականացվի աստիճանաբար՝ փուլ առ փուլ: Իրավական շահագրգռվածություն ապահովելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանել այնպիսի

				նախապայմաններ, որոնք կապահովեն հասարակական կազմակերպության իրավական շահագրգռվածությունը: Միայն հայցի առարկան կանոնադրային նպատակներից բխելու պահանջը դեռևս բավարար չէ իրական շահագրգռվածություն ապահովելու համար: Օրենքով նախատեսված որոշ բնապահպանական նշանակության փաստաթղթերի ընդունման գործընթացին մասնակցությունը, ինչպես նաև տվյալ ոլորտում փորձառությունը կանոնադրային նպատակների հետ մեկտեղ կարող են ապահովել հասարակական կազմակերպության իրական շահագրգռվածությունը:
4.	ԱԺ պատգամավոր Էլինար Վարդանյան	1.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մաս	1.Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասը հանել:	1.Չի ընդունվել: Խոսքը վերբերում է հասարակական կազմակերպություն հիմնադրելու կամ հասարակական կազմակերպությանը անդամակցելու՝ կրոնական կազմակերպությունների, կուսակցությունների և արհմիությունների արգելքին:
		2.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ	2.Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Կազմակերպությունն իրավունք ունի դիմել դատարան՝ կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի	2.Չի ընդունվել: Հասարակական կազմակերպությունների՝ այլոց իրավունքների պաշտպանության խնդրով դատարան դիմելու իրավունքի իրացումն առայժմ սահմանափակվում է

		մաս	պաշտպանությամբ»:	շրջակա միջավայրին վերաբերող հարցերով: Հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության ընդլայնումը կիրականացվի աստիճանաբար՝ փուլ առ փուլ: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ վիճարկման ենթակա են լինելու այն վարչական և նորմատիվ ակտերը, որոնք բխում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերից և նախատեսվող գործունեության տեսակներից: Դա, առաջին հերթին, բխում է Օրհուսի կոնվենցիայով ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորություններից:
		3.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ	3.Նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ մասը հանել:	3.Չի ընդունվել: Իրավական շահագրգռվածություն ապահովելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանել այնպիսի նախապայմաններ, որոնք կապահովեն հասարակական կազմակերպության իրական

		մաս		շահագրգռվածությունը: Միայն հայցի առարկան կանոնադրային նպատակներից բխելու պահանջը դեռևս բավարար չէ իրական շահագրգռվածություն ապահովելու համար: Օրենքով նախատեսված որոշ բնապահպանական նշանակության փաստաթղթերի ընդունման գործընթացին մասնակցությունը, ինչպես նաև տվյալ ոլորտում փորձառությունը կանոնադրային նպատակների հետ մեկտեղ կարող են ապահովել հասարակական կազմակերպության իրական շահագրգռվածությունը:
		4.«Հասարակական կազմակերպություններ ի մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մաս	4.Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասում «անընդմեջ 5 օր» բառերը փոխարինել «10 ժամ և ավելի» բառերով:	4.Ընդունվել է մասնակի: Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Եթե կամավոր աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր»: Այստեղ հիմք է ընդունվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով թույլատրվող շաբաթական 40 ժամը և որպես կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու պայման սահմանվել է դրա կեսը՝ շաբաթական 20 ժամ:

		5.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերություն	5.Նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը լրացնել հետևյալ նոր նախադասությամբ. «Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:	5.Ընդունվել է: Նախագծի 17-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արաիկ Հովհաննիսյան .	1.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետ	1.Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ կետից հանել «սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական» բառերը, որպեսզի տարընթերցում չառաջանա և ՀԿ-ները կարողանան մասնակցել տարբեր ծրագրերի և միջոցառումների՝ առանց սահմանափակման:	1. Ընդունվել է մասնակի: Նախագծում ոլորտների առանձնացումը կողմնորոշող նշանակություն ունի և միտված չէ սահմանափակելու կազմակերպության գործունեության շրջանակները Նախագծում նախատեսված ձևաչափով : Այն նպատակ ունի հնարավորինս բացահայտել այն ոլորտները, որոնցում հասարակական կազմակերպությունները կարող են մասնակցություն ունենալ : Թեև Նախագծում խոսվում է նաև այլ միջոցառումների մասին, այդուհանդերձ, տարընթերցումներից խուսափելու նպատակով Նախագծի 9-րդ հոդվածի 3-

				րդ մասը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ «Կազմակերպությունը իր կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող է պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և *այլ ոլորտների* ծրագրերին և միջոցառումներին:
		2.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	2.Նախագծի 18-րդ հոդվածի 7-րդ կետում նշված է՝ «իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը», այնինչ, ըստ Նախագծի, հերթական ժողով կարող է հրավիրվել հինգ	2.Ընդունվել է: Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «ժողովի» բառը փոխարինվել է «գործադիր մարմնի» բառերով: Նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը վերաշարադրվել է հետևյալ

			տարին մեկ անգամ: Առաջարկվում է հանել «Ժողովի հաստատմանը» բառերը և հստակեցնել խնդիրը:	կերպ՝ Ժողովն իրավասու է «առնվազն 5 տարին մեկ հաստատել գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները»: Նախագծի 23-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետով սահմանվել է, որ գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝ «հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները»:
		3.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ կետ	3.Նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ կետը հանել, քանի որ կարող են ընթացիկ փոփոխություններ լինել, այդ թվում՝ օրենսդրական դաշտի (օրինակ՝ նվազագույն աշխատավարձի և այլն) և կազմակերպությունը ստիպված կլինի ամեն անգամ նոր ժողով հրավիրել: Նախագծով սահմանված է հետևյալը՝ «Ժողովն իրավասու է՝ կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանել վարձատրության կարգը և պայմանները»:	3.Չի ընդունվել: Գործադիր մարմնի վարձատրության հարցը Կազմակերպության ներքին գործերին վերաբերող հարցերից է, որը ենթակա է լուծման Կազմակերպության որևէ իրավասու մարմնի կողմից՝ անկախ հետագա օրենսդրական փոփոխություններից: Հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով այդ իրավասությունը վերապահվել է Ժողովին, և ոչ թե նույն գործադիր

				մարմնին: Միևնույն ժամանակ, նշված իրավասությունը Կազմակերպության կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել կանոնադրությամբ նախատեսված **կոլեգիալ** կառավարման այլ մարմնի: Նման մոտեցումը կազմակերպության գործունեության համար ապահովում է որոշակի ներքին ժողովրդավարական կարգ՝ առանցքային նշանակություն ունեցող հարցերը կոլեգիալության սկզբունքով որոշելու եղանակի միջոցով:
		4.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 8-րդ կետ	4.Նախագծի 21-րդ հոդվածի 8-րդ կետում ներկայացված պահանջը իր բնույթով նման է վերոնշյալ 2-րդ առաջարկում նշված խնդրին: Նախագծով սահմանված է հետևյալը՝ «Ժողովն իրավասու է ընտրել Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորի), եթե սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի»:	4.Նախորդ կետում նշված հիմնավորումը ամբողջովին վերաբերում է նաև հիշյալ առաջարկին:
		5.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ կետ	5.Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ կետից հանել «տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը:	5.Ընդունվել է մասնակի: Տեղական ինքնակառավարման մարմիններին բացառելու դեպքում կվերանա հանրային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողություն

				իրականացնելու հնարավորությունը: Միաժամանակ, Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ կետում «տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը փոխարինվել է «համայնքային բյուջեի» բառերով:
		6.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 26-րդ հոդված	6.Նախագծի 26-րդ հոդվածը հանել ամբողջությամբ, քանի որ կազմակերպությունները ներկայացնում են օրենքով սահմանված համապատասխան հաշվետվություններ և լրացուցիչ անցնել աուդիտ, կարծում եմ, նպատակահարմար չէ:	6.Չի ընդունվել: ՀԿ-ների գործունեությունն ունի մեծ նշանակություն նաև հասարակության լայն շրջանակների համար և ըստ այդմ՝ պետք է լինի հնարավորինս թափանցիկ և վերահսկելի: Նշված գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ներդրվել է ֆինանսական գործունեության աուդիտը, որը ներկայումս իրականացվում է ոչ առևտրային այլ կազմակերպությունների՝ կուսակցությունների և հիմնադրամների դեպքում, սակայն ՀԿ-ների դեպքում կարգավորումը բացակայում է: Պետք է նկատի ունենալ նաև, որ պարտադիր աուդիտի նվազագույն շեմը (5 միլիոն դրամ) ընտրվել է հասարակական կազմակերպությունների հետ քննարկումների արդյունքում:

		7.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 5-րդ կետ, 33-րդ հոդվածի 2-րդ մաս	7.Նախագծի 33-րդ հոդվածի հետ կապված, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 24-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված է, որ հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատում է լիազոր մարմինը, ինչը նշանակում է որոշակի ժամանակ կպահանջվի մինչև այդ կարգերը լինեն և տեղեկացվեն հասարակական կազմակերպությունները: Ուստի առաջարկվում է հաշվետվությունների ներկայացումը սույն օրենքի նոր պահանջների համաձայն իրագործել 2018թ. հունվարի 1-ից:	7.Ընդունվել է մասնակի: Նախագծի՝ «Եզրափակիչ և անցումային դրույթներ» վերտառությամբ 33-րդ հոդվածում լրացվել է նոր՝ 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 1-ից»:
		8.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մաս	8.Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ ֆիզիկական անձանց անձնագրային տվյալների փոփոխության դեպքում կազմակերպությունը ենթակա է վերագրանցման: Ուստի առաջարկվում է վերանայել այս մոտեցումը:	8.Չի ընդունվել: Այստեղ խոսքը գնում է ոչ թե իրավաբանական անձանց պետական գրանցման՝ որպես պետության կողմից վերջինիս գոյությունը ճանաչելու գործընթացի մասին, այլ իրավաբանական անձի վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունների պետական գրանցման մասին, որոնք ներառվում են պետական միասնական գրանցամատյանում: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ

				ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է հետևյալը՝ «Իրավաբանական անձի հիմնադրի, մասնակցի կամ գործադիր մարմնի ղեկավարի ֆիզիկական անձ լինելու դեպքում անձնագրային տվյալների կամ իրավաբանական անձ լինելու դեպքում գրանցման տվյալների փոփոխության դեպքում պետական միասնական գրանցամատյանում գրառված համապատասխան տեղեկությունները փոփոխվում են ինքնաշխատ կերպով՝ նոր տեղեկությունները փոխօգնության կարգով ստանալով համապատասխան տեղեկատվական բազան վարող պետական կառավարման մարմնից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Այդ մասին իրավաբանական անձը (գործադիր մարմնի ղեկավարը) տեղեկացվում է էլեկտրոնային փոստի միջոցով, եթե նա տրամադրել է էլեկտրոնային փոստի հասցե: Ընդ որում, ֆիզիկական անձանց (հիմնադիր,

				մասնակից, գործադիր մարմնի ղեկավար) տվյալները կանոնադրության մեջ ներառելու պահանջը բացակայում է, ուստի դրանց գրանցումը կանոնադրության փոփոխության և դրա արդյունքում փոփոխված կանոնադրության պետական գրանցման անհրաժեշտություն չի առաջանում:
6.	ՀՀ կառավարություն	«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մաս	Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասի «անընդմեջ 5 օր» բառերը փոխարինել «10 ժամ և ավելի» բառերով: **Հիմնավորում -** Կազմակերպության կողմից կամավորի աշխատանքի չարաշահման հնարավոր դեպքերը բացառելու կամ նվազեցնելու նպատակով առաջարկում ենք կամավորի աշխատանքի ժամկետները հաշվել ոչ թե օրերով, այլ ժամով: Հատկապես, երբ նախագծում օգտագործվում է «անընդմեջ» բառը, ապա դա լայն հնարավորություն է տալիս կազմակերպությանը շարունակաբար մինչև 5 օր կամավոր ներգրավել և չկնքել նրա հետ պայմանագիր, իսկ ժամային հաշվարկի դեպքում որոշ ժամաքանակից հետո պարտավոր է կնքել պայմանագիրը: Բացի այդ «օր» եզրույթը տարընկալման	Նախագծի 17-րդ հոդվածի 3-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Եթե կամավոր աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր»: Այստեղ հիմք է ընդունվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով թույլատրվող շաբաթական 40 ժամը և որպես կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու պայման սահմանվել է դրա կեսը՝ շաբաթական 20 ժամ:

			տեղիք է տալիս:	
		2.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերություն	2.Նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ, հետևյալ բովանդակությամբ «*Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»:* **Հիմնավորում –** Սա լրացուցիչ երաշխիք է կամավորի համար՝ կազմակերպության կողմից իր իրավունքների խախտման դեպքում դիմելու իրավունքի պաշտպանության:	2.Ընդունվել է: Նախագծի 17-րդ հոդվածում լրացվել է նոր՝ 8-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:
		3.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասեր	3.Քանի որ առաջարկվող նախագծով ընդհանուր ձևակերպմամբ են սահմանված կամավոր աշխատանքի պայմանագրին ներկայացվող նվազագույն պայմանները (հոդված 17, մաս 5), և բացակայում է կողմերի իրավունքների և պարտականությունների կոնկրետացման ու միօրինականացման պահանջը, ապա	3. Նախագծի 17-րդ հոդվածի 4-րդ մասը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Կամավոր աշխատանքի մասին պայմանագիրը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև, որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր

			մտավախություն կա, որ կազմակերպությունները միասնական մոտեցում չեն ցուցաբերի կամավորի մի շարք իրավունքների ամրագրման և ապահովման հարցում: Մասնավորապես, կամավոր աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովում, անվտանգություն, փաստացի կատարած ծախսերի հատուցում և այլն: Հաշվի առնելով, որ կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (հոդված 17, մաս 2) նպատակահարմար ենք համարում դրա կարգավորումից դուրս գտնվող հարաբերությունները ամրագրել և կարգավորել ՀԿ օրենքով, ուստի առաջարկում ենք նախագծի 17-րդ հոդվածը լրացնել նոր մասով, հետևյալ ձևակերպմամբ՝ *«**Կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի համար անհրաժեշտ, անվտանգ և առողջ պայմանները, ինչպես նաև կամավորին հատուցում է աշխատանքներն իրականացնելու հետևանքով փաստացի կատարած ծախսերի դիմաց»:**	աշխատանք, *իսկ Կազմակերպությունը ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ»:* *Կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի հատուցման վերաբերյալ առանձնացվել է նոր՝ 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Կազմակերպությունը կամավորին հատուցում է տրամադրում կամավոր աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց»:*
		4.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ	4.Կազմակերպության կանոնադրությանը ներկայացվող պարտադիր պահանջների շարքում անհրաժեշտ է նշել նաև	4.Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր՝ 9-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «կազմակերպության

		օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս	շահառուները:	շահառուները»:
		5.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մաս	5.Հասարակական կազմակերպությունների լուծարման գործընթացը դյուրացնելու նպատակով Կազմակերպության լուծարման լիազորությունը դադարում է Ժողովի բացառիկ իրավասություն հադիսանալ: Այն Կազմակերպության կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման այլ մարմնի:	5.Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասում «13» թիվը փոխարինվել է «12» թվով:
		6.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 1ին մաս և 32-րդ հոդվածի 2-րդ մաս	6.Նախագծի 31-րդ և 32-րդ հոդվածներում, որոնք վերաբերում են Կազմակերպության գործունեության կասեցմանը և արգելմանը, հստակեցնել Կազմակերպության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու հարցով Լիազոր մարմնի դիմումի պատճառաբանվածության պահանջը:	Նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Լիազոր մարմնի դիմումը պետք է լինի պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է հանդիսանում Կազմակերպության գործունեությունը կասեցնելու համար և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցները»: Նախագծի 32-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ կերպ՝ «Լիազոր մարմնի՝ Կազմակերպության հարկադիր լուծարման պահանջը պետք է լինի

				պատճառաբանված՝ նշելով այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որի խախտումը հիմք է հանդիսանում Կազմակերպության լուծարման համար և ներկայացնելով խախտման փաստը հաստատող ապացույցներ»:
		7.«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 5-րդ մաս	7.Հստակեցնել Կազմակերպության կասեցված գործունեությունը վերսկսելու հետ կապված հարցերը:	Նախագծի 31-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրվել է հետևյալ կերպ՝ «Կասեցման հիմքերը վերացնելու նպատակով դատարանը սահմանում է ողջամիտ ժամկետ: Կազմակերպության կողմից կասեցման հիմքերը վերացնելու վերաբերյալ ապացույցները ներկայացվում են դատարան: Դատարանը որոշում է կայացնում կազմակերպության գործունեությունը վերսկսելու մասին, եթե ներկայացված ապացույցների հիման վրա եզրահանգման է գալիս կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացված լինելու մասին»:
		8.ա)«Հասարակակա՝	ՀՀ վարչապետի հանձնարարականի հիման վրա, ըստ որի՝ «Վերացվում են	«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ

		կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Արդարադատության նախարարության կողմից իրականացվող արհեստակցական, կրոնական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեության տեսչական գործառույթները, իսկ մնացած ոչ առևտրային կազմակերպությունների վերահսկողության գործունեության, այդ թվում՝ ստուգումների անցկացման գործառույթը վերապահվում է ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի», կարգավորել Հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող սուբյեկտի հետ կապված հարաբերությունները:	օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «ՀՀ արդարադատության նախարարության» բառերը փոխարինվել են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի» բառերով:
		բ)«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում 7-րդ հոդվածով լրացվող 38-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր		«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում 7-րդ հոդվածով լրացվող 38-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում, ինչպես նաև 39-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերը փոխարինվել են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն

		գ)Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներով լրացվող 169.25 և 169.26 հոդվածներ,		առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող 169.25 հոդվածում, որը վերաբերում է հասարակական կազմակերպության կողմից հաշվետվությունը չհրապարակելուն, «ՀՀ արդարադատության նախարարություն» բառերը փոխարինվել են «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող 169.26 հոդվածում, որը վերաբերում է հասարակական կազմակերպության կողմից կանոնադրային նպատակներին անհամապատասխան գործունեություն իրականացնելուն, «ՀՀ արդարադատության նախարարության»

		դ)Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդվ. 169.[18], 223.[1], 244.[2]		բառերը փոխարինվել են «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի» բառերով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[18]-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը», «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերը փոխարինվել են համապատասխանաբար «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին», «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223.1 հոդվածում հանվել է «169.[18]-րդ» բառը, իսկ «օրինականության վերահսկողության տեսչության» բառերը փոխարինվել են «վերահսկողական ծառայության» բառերով: Վարչական իրավախախտումների

		ե)«Արհեստակցա-կան միութունների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26		վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 244.[2]-րդ հոդվածում «169.[15]» թվից հետո լրացվել է «169.[18]» թվով : «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը ուժը կորցրած է ճանաչվել :
		9.«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ	9.Հստակեցնել նախագծի 5-րդ հոդվածը, քանի որ կատարված փոփոխությունից հետևում է, որ կազմակերպության անվանման գրանցման հնարավորությունը կամ գրանցման մերժումը որոշվում է անհապաղ, եթե անվանումը պարունակում է հայհոյանքներ, վիրավորական անվանումներ, անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, հակասում է մարդասիրության և բարոյականության սկզբունքներին: Նշված սկզբունքները թվայնացման ենթակա չեն և, հետևաբար, անհապաղ կատարումն անհնար է:	9.Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 32.1 հոդվածի 4-րդ մասը լրացվել է հետևյալ նախադասությամբ՝ «Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերում Կազմակերպության անվանման գրանցումը կամ գրանցման մերժումը իրականացվում է մեկօրյա ժամկետում»:

		կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված		
		10.«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք	10.«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիրը համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:	10.Ընդունվել է: Նախագծի վերնագիրը վերաշարադրվել է հետևյալ կերպ՝ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:
		11.ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 52, մաս 2	11.«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով կատարվող լրացումն համապատասխանեցնել լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին)՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին»	11.Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:

			ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, ինչպես նաև պահպանել համարակալման տեխնիկական կանոնները:	
		12.Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք	12.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում լրացվող հոդվածների համարակալումը համապատասխանեցնել գործող օրենքի համարակալմանը՝ հաշվի առնելով, որ 169.25-րդ համարակալմամբ հոդված արդեն իսկ առկա է:	12.Ընդունվել է: Նախագծի համարակալման մասով կատարվել է համապատասխան փոփոխություն: